Կարևոր տեղեկություններ կոյուղու ծառայությունների համար գանձվող վճարումների առաջարկվող բարձրացման վերաբերյալ

Լոս Անջելեսի քաղաքապետարանն առաջարկում է վերսկսել կոյուղու ծառայությունների համար գանձվող վճարումների բարձրացումը, որը դադարեցվել էր 2020 թվականին՝ համաճարակի պատճառով: Սա անհրաժեշտ է Անջելեսի բնակիչների հանրային առողջությունը և շրջակա միջավայրը պաշտպանելու համար: Խնդրում ենք տեղյակ լինել որ կարիքավոր տնային տնտեսություններին օգնություն հասանելի կլինի: Կարդացեք ավելին ստորև.

☑ Ներկայի համար անհրաժեշտ գործողություններ

Լհամաճարակի պատճառով 2020 թվականին կոյուղու ծառայությունների համար գանձվող վճարումների բարձրացումումները դադարեցվեցին:

Այս ամռանը, 45-օրյա հանրային քննարկումներից հետո, կոյուղու ծառայությունների համար գանձվող վճարումների բարձրացումը կվերսկսվի 2024 թվականի աշնանը: Կոյուղու ծառայությունների համար գանձվող վճարումների բարձրացումը կարևոր է ենթակառուցվածքային նախագծերի կառուցման, հանրային առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության համար, ներառելով ջրային ուղիները, լողափերը և օվկիանոսը:

☑ Հանրային առողջության և շրջակա միջավայրի պաշտպանություն

Կոյուղու ծառայությունների համար գանձվող վճարումները ուղղված են նպաստելու Լոս Անջելեսի բնակիչների առողջությանը և շրջակա միջավայրի պաշտպանությանը՝ կատարելով արդիականացում և վերանորոգում Լոս Անջելեսի կեղտաջրերի մշակման հնացած համակարգում և ջրի զտման կայաններում: Սա այն համակարգն է, որը անվտանգ կերպով հեռացնում է կեղտաջրերը ձեր տներից, ձեռնարկություններից, դպրոցներից և համայնքային հաստատություններից: Կեղտաջրերը

մշակվում, մաքրվում և վերափոխվում են Լոս Անջելեսի ջրի զտման չորս կայաններում: Շատ խողովակաշարեր պետք է վերանորոգվեն կամ փոխարինվեն, իսկ կոյուղու և մաքրման կայանների բարելավման ծրագրերը շարունակվում են՝ որպեսզի ապահով լինենք որ մաքուր ջուր ունենք և պաշտպանում ենք մեր շրջակա միջավայրը, ներառյալ մեր ջրային ուղիները, լողափերը և օվկիանոսը

☑ Աջակցություն կարիքավոր տնային տնտեսություններին

Մենք գիտենք, որ շատ տնային տնտեսություններ դեռ կարիքի մեջ են: Լոս Անջելեսում բնակվողների համար հասանելի կլինի ֆինանսական օգնություն: Դուք և ձեր ընտանիքը կարող են իրավասու լինել ֆինանսական օգնության՝ կոյուղու ծառայությունների համար գանձվող վճարումների բարձրացումից առաջացած ազդեցություններից փոխհատուցվելու համար: Քաղաքապետարանը ներկայումս ֆինանսական օգնություն է առաջարկում կարիքավոր տնային տնտեսություններին կոյուղու ծառայության վճարի համար: Այս օգնությունը կշարունակվի իրավասու տնային տնտեսությունների համար:

Դուք նաև կկարողանաք ձեր հաշիվը վճարել ամսական, ոչ թե երկամսյա, և այս տարբերակը հասանելի է բոլոր վճարողների համար, անկախ եկամուտից:

Պարզելու համար թե արդյոք դուք իրավասու եք EZ-SAVE ծրագրին կամ փոխելու համար ձեր հաշվարկային ժամանակացույցը Level-Pay ծրագրի միջոցով՝ այցելեք՝ :
https://www.ladwp.com/financialassistance

☑ Լրացուցիչ տեղեկություններ առաջարկվող գների մասին և մեր առցանց հաշվիչը

Յուրաքանչյուր տնային տնտեսության կոյուղու ծառայությունների համար գանձվող վճարումների բարցրացումը տարբեր կլինի, կախված ձեր ջրի օգտագործման քանակից: Սովորական բաժանորդը որը յուրաքանչյուր երկու ամիսը մեկ օգտագործում է 1300 խորանարդ ոտնաչափ ջուր, կարող է ակնկալել ստորև ներկայացված վճարումները: Ձեր ակնկալվող կոյուղու ծառայության վճարը հաշվարկելու համար այցելեք՝ : **https://www.lacitysan.org/rates**

Մեր ներկայացուցիչները պատրաստ են պատասխանել վճարումների հետ կապված ձեր հարցերին:

Եթե ցանկանում եք ավելին իմանալ, խորհուրդ ենք տալիս զանգահարել **1-800-773-2489** հեռախոսահամարով, աշխատանքային օրերին՝ առավոտյան 7:30-ից մինչև 17:30-ը:

Կարող եք նաև նամակ ուղարկել **sansscrates2024@lacity.org** հասցեին: Նամակների պատասխանները կպատասխանվեն աշխատանքային ժամերին և կտրամադրվեն ձեր էլ. նամակ ստանալուց մեկ աշխատանքային օր հետո:



Հյուսիսային արտահոսքի կոյուղու վերականգնման ծրագիր

Առաջիկա նախագծեր

Առաջիկա հինգ տարիների ընթացքում քաղաքապետարանը հարյուրավոր նախագծերի մեջ ներդրումներ կանի քաղաքի ամբողջ տարածքում: Այս նախագծերի ակնկալվող ծախսերը կգերազանցեն 3 միլիարդ դոլարը:

Նախագծեր կսկսվեն կառուցելու, բարելավելու կամ փոխարինելու կարևոր պոմպակայանները, որոնք կանխում են կոյուղաջրերի արտահոսքը:

Լոս Անջելեսի կոյուղու համակարգի ողնաշարը հանդիսացող 6700 մղոն երկարությամբ Հյուսիսային Արտահոսքի Կոյուղու (North Outfall Sewer) արդիականացումը կավարտվի երկու տասնամյակ տևող շինարարական ծրագրերից հետո՝ ապահովելով դրա սպասարկումը գալիք սերունդների համար:

Ջրի զտման կայանները կնախապատրաստվեն Լոս Անջելեսի ապագա կարիքներին դիմակայելու համար: **https://www.lacitysan.org/rates**

environment LA SANITATION
CITY OF LOS ANGELES
zero waste • zero wasted water

Որպես Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի 2-րդ վերնագրի ներքո գտնվող ընդգրկված կազմակերպություն՝ Լոս Անջելեսի քաղաքապետարանը խտրականություն չի դնում հաշմանդամության հիման վրա և, ըստ պահանջի, կտրամադրի ողջամիտ հարմարեցում իր ծրագրերին և գործունեությանը հասանելիությունն ապահովելու համար: